ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 216

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.06103 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը *որոշում է.*

Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.06103 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-020-0132-, գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 3-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 217

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 68-րդ և 70-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 30.04.2021 թվականի թիվ 056 որոշումը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 24.06.2021թվականի թիվ 11 դրական եզրակացությունը 30.07. 2021 թվականին կայացած աճուրդի թիվ 1 և թիվ 2 արձանագրությունները՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում Է***՝

1. Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.50435 հա (ծածկագիրը՝ 10-012-0430-0008, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը 510 600 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված <<Թավիթիան Վինյարդս>> ՍՊԸ-ին, ի դեմս տնօրեն Գագիկ Նորիկի Խուդատյանին (լ/ա. Վարդան Արմենակի Խաչատրյան):

2. Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.35473 հա (ծածկագիրը՝ 10-012-0430-0009, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը 372 400 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված <<Թավիթիան Վինյարդս>> ՍՊԸ-ին, ի դեմս տնօրեն Գագիկ Նորիկի Խուդատյանին (լ/ա. Վարդան Արմենակի Խաչատրյան):

3. Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 2.23578 հա (ծածկագիրը՝ 10-012-0432-0010, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը 2 300 000 ՀՀ դրամով օտարել աճուրդում հաղթող ճանաչված <<Թավիթիան Վինյարդս>> ՍՊԸ-ին, ի դեմս տնօրեն Գագիկ Նորիկի Խուդատյանին (լ/ա. Վարդան Արմենակի Խաչատրյան):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 218

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.57549 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը, ՀՀ Վայոց ձոր մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի 07.07.2021թվականի թիվ 2 նիստի արձանագրությունը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.57549 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0287-0010, գործառնական նշանակությունը՝ խաղող) բարձրարժեք հողատեսքը փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ 4-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 219

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 32-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 17 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասը, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի 32-րդ փողոց թիվ 17 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 10-008-0017-0022, հողամասի չափը՝ 0.101 հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) Արայիկ Մարտիկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված 329.2 քմ բնակելի տունը ճանաչել օրինական:
2. Առաջարկել կառույցն իրականացրած Արայիկ Սարգսյանին վճարելու 1 ք.մ.՝ 1209 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված բնակելի տան համար՝ ընդամենը 398 003 ՀՀ դրամ (երեք հարյուր իննսունութ հազար երեք) ՀՀ դրամ՝ հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ սահմանված տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները:
3. Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,
4. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում ինքնակամ կառույցն իրականացրած անձանց կողմից սահմանված գումարը չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 220

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՌՈՒԲԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՉՈՐԱՑԱԾ ԾԱՌԵՐ ԵՎ ՃՅՈՒՂԵՐ ՀԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 16.11.2018 թվականի թիվ 108 որոշումը, «Արենի համայնքի տարածքում ապօրինի ծառահատումները կանխարգելելու և սանիտարական էտը կանոնակարգելու նպատակով» ստեղծված հանձնաժողովի 13.08.2021թվականի թիվ 2 նիստի արձանագրությունը, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

1. Թույլատրել Արենի համայնքի Արփի բնակավայրի բնակիչ Ռուբիկ Մինասյանին Արփի բնակավայրում իր սեփական հողամասին հարակից տարածքում կատարել չորացած ծառերի և ճյուղերի սանիտարական հատում՝ որպես վառելափայտ օգտագործելու նպատակով,

2. Հատված ծառերի և ճյուղերի յուրաքանչյուր խորանարդ մետրի համար համայնքապետարանին վճարել վեց հազար ՀՀ դրամ գումար,

3. Վառելափայտի առավելագույն չափ սահմանել 3խմ,

4. Սույն որոշման կատարման և հսկողության պատասխանատվությունը դնել Արենիի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Արամ Աթանեսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 221

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԻՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ, 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 10-036-0036-0011 ԾԱԾԿԱԳԻՐ ԿՐՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱՉՅԱ ԼԵՆԻԿԻ ԹԱՎԵՐԴՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արենի համայնքի ղեկավարը, քննության առնելով 26.07.2021թ հարուցված վարչական գործը, այն է. «Հրաչյա Լենիկի Թավերդյանին պատկանող 10-036-0036-0011 կադաստրային ծածկագիրը կրող 0,262 հա հողատարածքով շինության նկատմամբ իրավունքը վերականգնելու մասին», *պարզեց որ.*

Հրաչյա Լենիկի Թարվեդյանը (հասցեն՝ Արենի համայնք, գ. Չիվա փ.4, տ16 անձնագիր՝ 8814182673) 30.06.2021թ.-ին դիմում է ներկայացրել Արենի համայնքի ղեկավարին խնդրելով իրեն պատկանող (հասցե՝Արենի համայնք, գ. Չիվա բնակավայրի 3-րդ փողոց 4-րդ նրբանցք թիվ 7) 10-036-0036-0011 կադաստրային ծածկագիրը կրող 0,262 հա հողատարածքով շինության նկատմամբ իրավունքը վերականգնել, ինչի կապակցությամբ Արենի համայնքի ղեկավարը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով սահմանված կարգով կայացրել է վարչական վարույթ հարուցելու վերաբերյալ որոշում: Արենիի համայնքապետարանի « Արենի համայնքի տարածքում վարչական իրավախախտումներ հայտնաբերելու և պատասխանատու անձանց (սուբյեկտներին) վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով» մշտական հանձնաժողովը հրավիրել և անցկացրել է լսում Հրաչյա Լենիկի Թարվեդյանի մասնակցությամբ.

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

1. Հրաչյա Լենիկի Թավերդյանի անվամբ գրանցված է «Արտադր մետ» նմուշով գույք առանց այլ տվյալների, որն իրականում հանդիսանում է անասնագոմ՝10-036-0036-0011 կադաստրային ծածկագիր կրող քարե շինություն՝ օժանդակ հողատարածքով, որը գտնվում է Արենի համայքի Չիվա բնակավայրի 3-րդ փողոց 4-րդ նրբանցք թիվ 7 հասցեում:

2. Հայաստանի ազգային արխիվ ՊՈԱԿ-ի Վայոց Ձորի մասնաճյուղի վարիչի կողմից 16.07.2019 տրված թիվ ՎՁ-558 գրությամբ հայտնվել է, որ Եղեգնաձորի շրջանի Չիվայի գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի 01.01.1991.-03.03.1993թթ. նիստերի արձանագրություններում Հրաչյա Լենիկի Թավերդյանին անասնագոմ հատկացնելու վերաբերյալ տեղեկություններ չի հայտնաբերվել: Միաժամանակ հայտնվել է, որ 01.04.1992-1996թթ Չիվայի գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի նիստերի արձանագրությունները Վայոց Ձորի մարզային մասնաճյուղ չի հաձնվել:

3. Վայոց Ձորի մարզի Արենիի համայքապետարանի 15.07.2019 թ թիվ 1059-19 տեղեկանքի համաձայն՝ նախկին Չիվայի համայքապետարանի կողմից Արենիի հայաքապետարան է փոխանցվել 1996-ից սկսած բոլոր իրավական փաստաթղթերը, որոնք հանձնվել են Վայոց Ձորի մարզային արխիվ և միաժամանակ հայտնել, որ մինչև 1996 թվականը գյուղապետրանից վարվող իրավական ակտերի մասին մատյանները, ինչպես նաև Չիվայի գյուղական խորհրդի սեփականաշնորհման հանձնաժողովի 1991-1996 թվականների արձանագրությունները չեն պահպանվել և չեն հանձնվել Արենիի համայքապետարան:

4. Թիվ ԱՎԴ/2317/02/19 քաղաքացիական գործով ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանը՝ 25.12.2019թ.-ին կայացրել է գործի վարույթը կարճելու մասին որոշում, որով որոշել է.« Ըստ դիմումի՝ Հրաչյա Լենիկի Թարվերդյանի՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի Համայնքի Չիվա գյուղում գտնվող անասնագոմի և կից 0.262 հա հողատարածքի սեփականության իրավունքի ճանաչման վերաբերյալ թիվ ԱՎԴ/2317/02/19 քաղաքացիական գործի վարույթը կարճել»:

5. Հրաչյա Լենիկի Թարվեդյանը (հասցեն՝ Արենի համայնք, գ. Չիվա , 4փ տ.16 անձնագիր՝ 8814182673) 30.06.2021թ.-ին դիմում է ներկայացրել Արենի համայնքի ղեկավարին խնդրելով իրեն պատկանող (հասցե՝ Արենի համայնք, գ. Չիվա բնակավայրի 3-րդ փողոց 4-րդ նրբանցք թիվ 7) 10-036-0036-0011 կադաստրային ծածկագիրը կրող 0,262 հա հողատարածքով շինության նկատմամբ իրավունքը վերականգնելու 26.07.2021թ թիվ 1 նիստի թիվ 1 արձանագրություն:

6. Հանձնաժողովի 26.07.2021թ. ԱՀՎՎ 01/1 նիստի թիվ 1 արձանագրությունը:

Վարչարարության կարգով հարուցված և իրականցված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը՝ հաստատված եմ համարում հետևյալը՝ Վայոց Ձորի մարզ, Արենի համայնք, գ. Չիվայի բնակիչ Հրաչյա Թարվերդյանի անվամբ գրանցված է «Արտադր մետ» .. նմուշով գույք առանց այլ տվյալների՝ 10-036-0036-011 կադաստրային ծածկագիր կրող քարե շինություն՝ օժանդակ հողատարածքով, որը գտնվում է Արենի համայքի Չիվա բնակավայրի 3-րդ փողոց 4-րդ նրբանցք 7 հասցեում, սակայն շինության վերաբերյալ փաստաթղթեր չեն պահպանվել և չեն հայտնաբերվել:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Արենիի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2021թ. հուլիսի 26-ին հրավիրվել է լսում, որին մանակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Հրաչյա Լենիկի Թավերդյանին:

Արենի համայնքի տարածքում ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների, ապօրինի հողօգտագործումների հայտնաբերման, կանխարգելման, կասեցման և

օրինականացման կամ օրենքով սահմանված կարգով դրանց առաջացրած հետևանքների վերացման նպատակով մշտական հանձնաժողովի կողմից վարչական վարույթի գործով ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել և ներկայացվել են համայնքի ղեկավարին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումները.

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Համայնքի ղեկավարը քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝ կատարում է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առնում քաղաքացիների հանրագրերը, դիմումներն ու բողոքները և ձեռնարկում է համապատասխան միջոցներ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե՝ գոյություն ունի միևնույն անձի, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով ուժի մեջ մտած վարչական կամ դատական ակտ:

Տվյալ պարագայում Հրաչյա Լենիկի Թավերդյանը՝ մասնակցելով վարչական վարույթի լսումներին հայտնել է, որ Արենի համայնքի Չիվա բնակավայրի 3-րդ փողոց 4-րդ նրբանցք 7 հասցեում գտնվող 10-036-0036-0011 կադաստրային ծածկագրով 0.262հա հողատարածքով շինության վերաբերյալ բոլոր հարկային պարտավորությունները կատարվել են իր կողմից, միաժամանակ հայտնել է, որ իր իրավունքների պաշտպանության նպատակով դիմել է դատարան: Նշվածի հաշվառմամբ խնդրել է բավարարել իր դիմումը: Մինչդեռ, www.datalex.am իրավական տեղեկատվական համակարգում առկա տվյալների համաձայն թիվ ԱՎԴ/2317/02/19 քաղաքացիական գործով ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանը՝ 25.12.2019թ.-ին կայացրել է գործի վարույթը կարճելու մասին որոշում, որով որոշել է. « Ըստ դիմումի՝ Հրաչյա Լենիկի Թարվերդյանի՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի Համայնքի Չիվա գյուղում գտնվող անասնագոմի և կից 0.262 հա հողատարածքի սեփականության իրավունքի ճանաչման վերաբերյալ թիվ ԱՎԴ/2317/02/19 քաղաքացիական գործի վարույթը կարճել»:

Վերոգրյալի հաշվառմամբ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմումով հարուցված վարչական վարույթով գոյություն ունի միևնույն անձի, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով ուժի մեջ մտած դատական ակտ ուստի գտնում եմ, որ հարուցված վարչական վարույթը պետք է կարճել:

Ելնելով վերագրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով . Արենի համայնքի ղեկավարը *որոշում է՝*

1. Կարճել Հրաչյա Լենիկի Թավերդյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը:
2. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափող անձանց վերաբերյալ տեղեկություններ հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 222

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող.

1.1 1.48076հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0154-, գործառնական նշանակությունը՝ արոտավայր) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության:

1.2 0.38321հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0154-, գործառնական նշանակությունը՝ արոտավայր) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության:

1.3 0.38357 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0154-, գործառնական նշանակությունը՝ արոտավայր) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության:

1.4 0.35575հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0112-, գործառնական նշանակությունը՝ արոտավայր) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության:

1.5 1.9հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0265-, 1.71366հա-ի գործառնական նշանակությունը՝ արոտավայր, 0.18634հա-ի գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 5-րդ կարգի կորիզավոր պտղատու այգի գործառնական նշանակության:

1.6 3.19072հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0265-, 0.85222հա-ի գործառնական նշանակությունը՝ արոտավայր, 2.33850հա-ի

գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 5-րդ կարգի կորիզավոր պտղատու այգի գործառնական նշանակության:

1.7 0.29537հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0265-, գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 5-րդ կարգի կորիզավոր պտղատու այգի գործառնական նշանակության:

2. Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող.

2.1 0.32720 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-020-0161-0054, գործառնական նշանակությունը՝ վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 5-րդ կարգի խաղողի այգի գործառնական նշանակության:

2.2 0.13666 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-020-0161-0055, գործառնական նշանակությունը՝ վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 5-րդ կարգի խաղողի այգի գործառնական նշանակության:

2.3 0.32720 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-020-0161-0054, գործառնական նշանակությունը՝ վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 5-րդ կարգի խաղողի այգի գործառնական նշանակության:

2.4 0.72314 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-020-0136-, գործառնական նշանակությունը՝ արոտավայր) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 5-րդ կարգի վարելահող գործառնական նշանակության:

3. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող.

3.1 0.11965 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0315-, գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 3-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության:

3.2 0.10263 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0251-, գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 4-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության:

3.3 0.10289 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0251-, գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 4-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 223

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԱՍԻՍ ՓԱՓԱԳԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.108 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 7-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.12.2011 թվականի թիվ 1920-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն, 15.04.2021թվականի թիվ 600-Ն որոշումները, Արենի համայնքի ավագանու 28.07.2021 թվականի թիվ 096 որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի Արենի բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել փոփոխություն՝ Մասիս Փափագի Ղազարյանի սեփականություն հանդիսացող 0.108հա (ծածկագիրը՝ 10-008-0210-0002, գործառնական նշանակությունը՝ վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայի՝ արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության՝ ձկնաբուծարան կառուցելու նպատակով:

2. Վերը նշված արտադրական նշանակության հողամասին տալ հետևյալ հասցեն՝ Արենի համայնք, Արենի բնակավայր 37 փողոց թիվ 21:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 224

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ ՄԱՍԻՍ ՓԱՓԱԳԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդված 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 19.03.2015թվականի թիվ 596-Ն որոշումը, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է***՝

1. Արենի համայնքի վարչական տարածքի Արենի բնակավայրում կառուցապատող Մասիս Փափագի Ղազարյանին տալ նախագծման թույլտվություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի,

2. Նախագծման թույլտվության հերթական համարն է 27-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 225

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԼՈՒՍԻԿ ԵՂԻՇԵԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0.017 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը *որոշում է*.

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Լուսիկ եղիշեի Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող 0.017 հա բնակավայրերի նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-008-0066-, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) վերահասցեավորել ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Արենի 13 փողոց թիվ 5/1, նախկինում տրված գ. Արենի 13-րդ փողոց թիվ 5 հասցեի փոխարեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 226

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ՉՈՐԱՑԱԾ ԾԱՌԵՐԻ ԵՎ ՃՅՈՒՂԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2020ԹՎԱԿԱՆԻ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՈՐՊԵՍ ՎԱՌԵԼԱՓԱՅՏ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 15.12.2017 թ.-ի թիվ 55-Ն որոշման պահանջները, <<Արենի համայնքի տարածքում ապօրինի ծառահատումները կանխարգելելու և սանիտարական էտը կանոնակարգելու նպատակով ստեղծված հանձնաժողովի>> 10.08.2021թ-ի թիվ 01 արձանագրությունը՝ Արենի համայնքի ղեկավարը *որոշում է*.

1. Արենի համայնքի վարչական տարածքից կատարել չորացած ծառերի և ճյուղերի սանիտարական հատում:

2. Հատված ծառերը, որպես վառելափայտ, տրամադրել Արենի համայնքի 2020թվականի 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների ընտանիքներին՝ յուրաքանչյուրին 3 խմ ծավալով:

3. <<Արենի>> ՀՈԱԿ-ի տնօրեն Սերյոժա Սիմոնյանին՝ կազմակերպել ծառահատման և վառելափայտի տեղափոխման աշխատանքները՝ դրանք հասցնելով զինծառայողների ընտանիքներին:

4. Սույն որոշման կատարման պատասխանատվությունը և հսկողությունը դնել Արենիի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Արամ Աթանեսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 227

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 43-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 28 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասը, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է***՝

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի 43-րդ փողոց թիվ 28 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 10-008-0075-0005, հողամասի չափը՝ 0.10341 հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) Արթուր Արտավազդի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված 215.9 քմ բնակելի տունը ճանաչել օրինական:
2. Առաջարկել կառույցն իրականացրած Արթուր Մարտիրոսյանին վճարելու 1 ք.մ.՝ 1209 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված բնակելի տան համար՝ ընդամենը 261 023 ՀՀ դրամ (երկու հարյուր վաթսունմեկ հազար քսաներեք) ՀՀ դրամ՝ հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ սահմանված տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները:
3. Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,
4. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում ինքնակամ կառույցն իրականացրած անձանց կողմից սահմանված գումարը չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 228

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԻՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ ՍԿԶԲՆԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԼԵՎՈՆ ԳԱՄԱՌՆԻԿԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արենի համայնքի ղեկավարը քննության առնելով վարչական գործը այն է՝ Արենի համայնքի Չիվա բնակավայրի 1-ին փողոցի սկզբնամասում գտնվող, Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում ինքնակամ շինություն կառուցելու վերաբերյալ վարչական իրավախախտման հարցը պարզեց որ.

Լևոն Գամառնիկի Թադևոսյանը (բնակության հասցե՝ Արենի համայքն գ. Չիվա 4փ., տ. 21) Արենի համայնքի Չիվա բնակավայրի 1-ին փողոցի սկզբնամասում գտնվող Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող տարածքում խախտելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 48-րդ հոդվածի և 154-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի և հողօգտագործման իրավունքի իրականացրել է ապօրինի շինություն, որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի և չորսհարյուրապատահիկի չափով, ինչի կապակցությամբ ՀՀ Վայոց ձորի ոստիկանության Եղեգնաձորի բաժնի պետ Հ. Վ. Կոստանյանի գրության հիման վրա 2021 թվականի օգոստոսի 20-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 48-րդ հոդվածի և 154-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ Արենիի համայնքապետարանի «Արենի համայնքի տարածքում վարչական իրավախախտումներ հայտնաբերելու և պատասխանատու անձանց (սուբյեկտների) վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով ստեղծված հանձնաժողովը հրավիրել և անցկացրել է լսում Լևոն Գամառնիկի Թադևոսյանի մասնակցությամբ

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

1. ՀՀ Վայոց ձորի մարզային վարչության Եղեգնաձորի բաժնի պետի 29.07.2021թվականի թիվ 82-3960 գրությունը
2. Արենի համայնքի տարածքում վարչականիրավախախտումներ հայտնաբերելու և պատասխանատու անձանց (սուբյեկտներին) վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով մշտական հանձնաժողովի 20.08.2021թ-ի թիվ 1 նիստի N1 արձանագրությունը:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը հաստատված եմ համարում հետևյալը՝

Վայոց ձորի մարզի Արենի համայնք գ. Չիվա 4Փ., 21 տան բնակիչ Լևոն Գամառնիկի Թադևոսյանի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում, իրականացրել է ինքնակամ շինության շինարարական աշխատանքներ, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, ուստի կարող ենք հաստատված համարել, որ քննարկվող շինությունը հանդիսանում է ինքնակամ կառույց:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով 2021 թվականի օգոստոսի 20-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով, Արենիի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2021թ-ի օգոստոսի 20-ին հրավիրվել է լսում,որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ ծանուցագրի ստորագրված տարբերակ/ Լևոն Գամառնիկի Թադևոսյանը:

Վերջինս մասնակցելով վարչական վարույթի լսումներին հայտնել է, որ պատրաստակամ է վճարել տուգանքը և օրենքով սահմանված կարգով գնել օրինականացված կառույցը:

Արենի համայնքի տարածքում վարչական իրավախախտումներ հայտնաբերելու և պատասխանատու անձանց (սուբյեկտներին) վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից վարչական վարույթի գործով ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել և ներկայացվել են համայնքի ղեկավարին.

Վարչական ակտն ընդունելու հիմնավորումները:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը կանխարգելում և կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը,շինությունը կամ այլ կառույցը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը:

Չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են ենթակա է քանդման, իսկ հողամասը նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան,շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում: Շինարարության թույլտվությունը համայնքներում տալիս է համայնքի ղեկավարը Կառավարության կողմից սահմանված կարգով:

Տվյալ պարագայում Լևոն Գամառնիկի Թադևոսյանը (բնակության հասցեն՝ Արենի համայնք գ. Չիվա 4Փ., տ.21) Արենի համայնքի Չիվա բնակավայրի 1-ին փողոցի սկզբնամասում գտնվող Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի /շինարարության թույլտվության/ և հողհատկացման իրականցրել է ապօրինի՝ ինքնակամ կառույցի շինարարություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը, բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ գյուղական համայնքներում պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելը և դրա հետևանքները չվերացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի և 154-րդ հոդվածի երկրորդ մասի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 4-րդ հոդվածով, 44-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով և 23-րդ հոդվածի 1-ին մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

1. Լևոն Գամառնիկի Թադևոսյանի նկատմամբ նշանակել տուգանք 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ Արենի համայնքի Չիվա բնակավայրում համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքը ինքնակամ զավթելու համար:
2. Լևոն Գամառնիկի Թադևոսյանի նկատմամբ նշանակել տուգանք 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ Արենի համայնքի Չիվա բնակավայրի 1-ին փողոցի սկզբնամասում համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում ինքնակամ շինություն կառուցելու համար:
3. Սույն որոշմամաբ նշանակված տուգանքի վճարման հաշվեհամարն է՝ 900355105066:
4. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողության ապահովումը հանձնարարել Արենիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:
5. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափող անձանց վերաբերյալ տեղեկություններ հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 229

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 3-րդ հոդվածի պահանջով՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող.

1.1 1.48076հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0154-, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

1.2 0.38321հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0154-, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

1.3 0.38357 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0154-, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

1.4 0.35575հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0112-, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

1.5 3.19072հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0265-, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի կորիզավոր պտղատու այգի) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

1.6 0.29537հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0265-, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի կորիզավոր պտղատու այգի) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2. Արենի համայնքի Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող.

2.1 0.32720 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-020-0161-0054, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի խաղողի այգի) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2.2 0.13666 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-020-0161-0055, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի խաղողի այգի) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2.3 0.32720 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-020-0161-0054, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի խաղողի այգի) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2.4 0.72314 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-020-0136-, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

3. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող.

3.1 0.11965 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0315-, գործառնական նշանակությունը՝ 3-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

3.2 0.10263 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0251-, գործառնական նշանակությունը՝ 4-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

3.3 0.10289 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0251-, գործառնական նշանակությունը՝ 4-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 230

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է***.

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող.

1.1 0.16693հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0101-, գործառնական նշանակությունը՝ արոտավայր) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության:

2. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող.

2.1 0.18906 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0300-, գործառնական նշանակությունը՝ արոտավայր) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 4-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության:

2.2 0.89525 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0284-) հողամասից առանձնացված 0.37373հա-ի (գործառնական նշանակությունը՝ արոտավայր) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 3-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության:

2.3 0.51000 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0300-, գործառնական նշանակությունը՝ արոտավայր) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության:

2.4 0.20993հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0329-, գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի

բարձրարժեք հողատեսքի՝ 4-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության:

2.5 0.37649հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0329-, գործառնական նշանակությունը՝ այլ) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 3-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության:

3. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող.

3.1 0.44694 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-037-0112-, գործառնական նշանակությունը՝ արոտավայր) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 4-րդ կարգի ջրովի վարելահող գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 231

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի՝ Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող.

1.1 0.16693հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0101-, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող.

2.1 0.18906 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0300-, գործառնական նշանակությունը՝ 4-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2.2 0.89525 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0284-, գործառնական նշանակությունը՝ 3-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2.3 0.51000 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0300-, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2.4 0.20993հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0329-, գործառնական նշանակությունը՝ 4-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2.5 0.37649հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-006-0329-, գործառնական նշանակությունը՝ 3-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

3. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող.

3.1 0.44694 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-037-0112-, գործառնական նշանակությունը՝ 4-րդ կարգի ջրովի վարելահող) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

3.2 0.52834 հա բնակավայրերի նշանակության (ծածկագիրը՝ 10-037-0001-0002, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման) հողամասը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 232

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ՉՈՐԱՑԱԾ ԾԱՌԵՐԻ ԵՎ ՃՅՈՒՂԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՈՐՊԵՍ ՎԱՌԵԼԱՓԱՅՏ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 15.12.2017 թ.-ի թիվ 55-Ն որոշման պահանջները, <<Արենի համայնքի տարածքում ապօրինի ծառահատումները կանխարգելելու և սանիտարական էտը կանոնակարգելու նպատակով ստեղծված հանձնաժողովի>> 27.08.2021թ-ի թիվ 03 արձանագրությունը՝ Արենի համայնքի ղեկավարը *որոշում է.*

1. Թույլատրել Արենի համայնքի Արփի բնակավայրի բնակիչներ Ռոման Հայրապետյանին և Անդրանիկ Համբարձումյանին Արենի համայնքի վարչական տարածքից կատարել չորացած ծառերի և ճյուղերի սանիտարական հատում՝ յուրաքանչյուրին 3խմ-ի չափով:

2. Սույն որոշման կատարման պատասխանատվությունը և հսկողությունը դնել Արենիի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Արամ Աթանեսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 233

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 15 դեկտեմբերի 2017 թվականի «Արենի համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց կարգը սահմանելու մասին» թիվ 55-Ն որոշումը, Արենի համայնքի «Զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, նորածին երեխա ունեցող ընտանիքներին, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման» հանձնաժողովի 27.07.2021թ . թիվ 9 նիստի արձանագրությունը Արենի համայնքի ղեկավարը **որոշում է.**

1. Արենի համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի 4729՝ այլ նպաստներ բյուջեի հոդվածի գումարներից Արենի համայնքի ներքոնշյալ սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն՝

h/h	Ազգանուն,անուն,հայրանուն	Դրամական օգնության չափը /հազար ՀՀ դրամ/	Բնակավայր
1.	Մկրտչյան Գագիկ Բաբկենի	25	Ագարակաձոր
2.	Կարապետյան Ժյուլվեր Մանվելի	30	Ագարակաձոր
3.	Հարությունյան Ահարոն Ժորայի	30	Ագարակաձոր

4.	Սարգսյան Սարգիս Նիկոլայի	20	Արփի
5.	Վարդանյան Աստղիկ Արշալույսի	20	Արփի
6.	Սուքիասյան Սոֆյա Վաչագանի	25	Արենի
7.	Սամսոնյան Հեղինե Ռուբենի	20	Արենի
8.	Ղազարյան Սիրվարդ Սենիկի	30	Ելփին
9.	Ալավերդյան Խաչատուր Բենիկիի	20	Ելփին
10.	Սմբատյան Արմեն Լենդրուշի	20	Ելփին
11.	Աղախանյան Հրանտ Նորայրի	20	Ելփին
12.	Մովսիսյան Մհեր Սիմոնի	20	Ելփին
13.	Մարտիրոսյան Աննա Վարուժանի	20	Ռինդ
	Ընդամենը	300	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 234

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՉԻՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.10573ՀԱ ԵՎ 0.11455հա ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը՝ Արենի համայնքի ղեկավարը *որոշում է*:

1. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արենի համայնքի սեփականություն հանդիսացող 0.10573 հա բնակավայրերի նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-036-0025-0009, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) վերահասցեավորել ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Չիվա 1-ին փողոց թիվ 12/1, նախկինում տրված գ. Չիվա 1-ին փողոց թիվ 12 հասցեի փոխարեն:

2. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արենի համայնքի սեփականություն հանդիսացող 0.11455 հա բնակավայրերի նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-036-0025-0008, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) վերահասցեավորել ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Չիվա 1-ին փողոց թիվ 10/1, նախկինում տրված գ. Չիվա 1-ին փողոց թիվ 10 հասցեի փոխարեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ